ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը մնում է լարված: Մայիսի 11-ին Ստեփանակերտում շարունակվում էր գործադուլը: Բնակչության կենսապահովման ձեռնարկություններից, ինչպես նաև օդային ու երկաթուղային տրանսպորտից, կապի ծառայություններից և բուժհիմնարկներից բացի, սոցիալ-արտադրական և մշակութային մյուս բոլոր օբյեկտները չէին աշխատում: Բացառությամբ ազգարային հատվածի, սովորական աշխատանքային ռիթմը խանգարված է Մարտակերտի, Մարտունու, Ակերանի և Հադրութի շրջաններում: Հադրութի շրջանի Տող գյուղի «Հոկտեմբեր» խորհտնտեսությունում մասնակիորեն դադարեցված են նաև գարնանացքային և մյուս աշխատանքները: Մարզային կենտրոնում և Ակերան ավանում միջոցներ են ձեռնարկվել դպրոցներում պարապմունքները վերսկսելու համար:

Կեսօրից հետո ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի խորհրդային ապարատի շենքի առջև հավաքվել էին քաղաքի մոտավորապես 700 բնակիչներ՝ մտահոգված այն բանով, որ Ստեփանակերտ են ժամանել Ադրբեջանի մի քանի ղեկավար աշխատողներ: Հավաքված մարդկանց մոտեցավ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին: Նա լսեց մարդկանց պահանջները և պատասխանեց նրանց հետաքրքրող մի շարք հարցերի:

Մայիսի 12-ին, օրվա առաջին կեսին ինքնավար մարզի իրավիճակը ընդհանուր առմամբ չի փոխվել: Ստեփանակերտի դպրոցներում մասնակիորեն պարապմունքները վերսկսել են հիմնականում բարձրդասարանցիները: Ազգամիջյան հողի վրա իրավախախտումներ չեն գրանցված:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ